



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԼՈՒՍԱՎՈՐԻՆ ԶԱՆԱՊԱՐԶՆԵՐՈՎ



Եր եկեղեցական օրացույցում ամեն տարի անփոփոխ կերպով, Հոգեգալստյան առաջին կիրակիից սկսած մինչև հինգերորդ կիրակին ընկած ժամանակամիջոցում, որն ընդգրկում է մի ամբողջ ամիս, նշվում են մեր անցյալի հոգևոր, մշակութային և ազգային կյանքի պատմական հիշատակներին և լուսնդեն դեմքերին նվիրված մի շարք գուտ հայկական տոներ, որոնց թվում Ս. Գրիգոր Լուսավորչի «Ելն ի վիրապէն» և «Գիտ նշխարաց» տոները, «Տօն Կարոտիկէ Ս. Էջմիածնի», Ս. Հոփսիմն և Ս. Գայանէ կույսերի, ինչպես նաև Տրդատ Թագավորի, Աշխեն Թագունու և Խոսրովիդուխտ իշխանու տոները, ապա Մեծն Ներսէս Պարբն հայրապետի և Խաչ եպիսկոպոսի, և հուսկ ուրեմն «Մերոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոբայ» տոները:

Ազգային-եկեղեցական հիշատակների և դեմքերի նվիրված տոների այս լուսավաղանգի մեջ տիրական դեմքը Ս. Գրիգոր Լուսավորիչն է, որի անունով նույն ամսում կանա Լուսավորչի կամ Ամառնային կոչված շաքաթապահքը:

Երայսազիտության և մեծարանքի ամենաջերմ զգացմունքներով է կապված մեր ժողովրդի սիրտը Լուսավորչի անվան, հիշատակի և նրա Հայրապետական Աթոռի հետ:

Լուսավորիչն է հանդիսացել «գրուս ամենայն բարեաց և հիմն կենաց յափտեանկանաց» (Հովն. Երզնկացի):

Ս. Գրիգոր Լուսավորչի անունը և հիշատակը նվիրական են հայ մարդու համար. որպես «ՀՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻՍ ԶԱՍՏՈՒՍ-

ՄԱՊԱՐԳԵՒ ԱԻՆՏԵՆԱՅՆ ԱԻՆՏԱՐԱՆԻ» Բարոյչի (Ագաթ.):

Լուսավորիչը մեր եկեղեցական մատենագրության նահապետն է, հոգևոր ծնողը Հայաստանյայց լուսածին զավակների, հոգեկվեր դաստիարակը հայ ժողովրդի, բարեխոսն ու ԼՈՒՍԱՎՈՐԻԶՐ ՀԱՅ ՀՈԳԻՆՆԵՐԻ, իր աստվածաբարբառ խրատներով. «Դեյ ձեզ և ուսուցանել կամիմ, եղբար իմ և որդիմ, գորս ի Քրիստոս Անտարանուն ծնայ», — գրում է նա իրեն վերագրվող նառերի հավաքածուում, որը կոչվում է «Յանախապատում» (զլ. Ժէ):

Ս. Գրիգոր Լուսավորչի հովվական կյանքի և առաքելական գործունեության, նրա «լուսատու վարդապետութեան և հրեշտակալուս վարուց առաքիւնութեանց, անգուգական համբերութեանց» մասին առաջինը գրել է մեր պատմիչներից Ագաթանգեղոսը իր «Պատմութիւն Հայոց» աշխատության մեջ:

Ագաթանգեղոսը Լուսավորչի՝ «մեծագոր նահատակի, Քրիստոսի խոստովանողի և նշմարտութեան վկայ»-ի վարժագրությունը գրել է առել Տրդատ Գ Արշակունի Թագավորի հրամանով, Դ դարի առաջին քառորդում Հայաստանում պատահած ֆաղափական և կրօնական իրադարձությունների և մանավանդ Հայոց աշխարհի քրիստոնեության դարձի պատմության յուսի տակ: Այս իսկ պատճառով, հաջորդ դարերի պատմիչները, և հատկապես Ղազար Փարպեցին (ե դար), Սեբեոս եպիսկոպոսը (է դար), Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը անվանում են «Գիրք Գրիգորիոսի»:

Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ը, որը բաղկանում է հինգ մասերից՝ հեղինակի

առաջաբանը, «Վարժ և պատմություն Սրբոյն Գրիգորի», «Վկայաբանություն Հովհաննիսի», «Վարդապետություն Սրբոյն Գրիգորի», «Դարձ փրկութեան աշխարհիս Հայաստան», հայ ժողովրդի մեջ ամենից շատ տարածված և ավելի քան 10 հրատարակությունների արժանացած գրքերից մեկն է եղել 1709 թվականից մինչև 1930 թվականը:

Ս. Գրիգոր Լուսավորիչ առաքելական իր գործունեությամբ, մատենագրական և մանկավարժական իր գործունեությամբ, իշխում է մեր դասական եկեղեցական մատենագրության բոլոր դարերի վրա: Նա Հայ եկեղեցու առաքելաշավիղ երկրորդ լուսավորիչն է, որը հայ ժողովրդին բերեց հոգևոր-բարոյական, իմացական վերածնության պատգամները, լուսավորեց Հայաստան աշխարհը քրիստոնեական լույսով և հանդիսացավ, խորհրդացու գեղեցիկ բացատրությամբ՝ «մերոյ լուսաւորութեան լուսաւոր վերակացու, ռանկիրայ և երկրորդ լուսաւորիչ»:

Այս զգացմունքն ու գիտակցությունը միշտ պայծառ է եղել հայոց սրտերում ավելի քան 1600 տարի: «Մի է Հայրն մեր (Լուսաւորիչ), մի և միակրօն Ազգն Հայոց, և ի միոյ ծնողէ բազմութիւն գաւակաց ծնան», — գրում է Հովհաննէս Երզնկացի, բնութագրելով Լուսավորչի կատարած առաքելական, փարոզական դերը հայ ժողովրդի կյանքում:

Հայ եկեղեցին և հայ ժողովուրդը, տարին երեք անգամ, մեծաբար են Ս. Գրիգոր Լուսավորչի հիշատակը:

Վերահիշյալ ամսում, Լուսավորչի «Ելն ի վիրապէն» տոնի հաջորդ օրը, համազգային հանդիսությամբ նշում ենք նաև հայ ժողովրդի Սրբություն Սրբոց, մեր ազգային-եկեղեցական նվիրական կենտրոն, Հայաստանյայց Առաքելական եկեղեցու ծագման և հաստատության օրրան Ս. Էջմիածնի Մայր Տաճարի հիմնադրման տարեդարձը, որը նույնպես պատմականորեն կապվում է Ս. Լուսավորչի անվան և գործունեության հետ:

Եկեղեցու տոն կատարելու սովորությունը, ինչպես նշում է Օրմանյան սրբագանը, հատուկ է միմյայն Հայ եկեղեցուն:

Ս. Էջմիածնի տոնը կատարվում է Հոգեգալստյան տոնից տասներեք օր հետո, ի հիշատակ Լուսավորչի պատմական տեսիլքի, «գոր մեր հավատքին Հայրը Ս. Գրիգոր ունեցավ արդարև, ըստ Ագաթանգեղոսի, Արտաշատու զնշանեն ելլելեն քիչ հետո, և որուն մեջ տեսավ անկառ ամպեղեն և լուսեղեն տաճարի մը ձևը, սյուներով և կամարներով կազմված, Վաղարշապատի հայ հին հեթանոսության դիվական պաշտամանց այն կետին վրա, գոր Աստուծո

Միածինը երկինքեն իջնելով ջախջախելով խորտակած էր ոսկի մուրճով: Տոնն է անկա մեր մեջ հայկական կոապաշտության վերջնական ջնջումով՝ անոր փոխարեն կանգնած ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ՍՈՒՐՔ ԵՎԵԼՆԻՆ ԵՎ ԱՆՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ: Մեկ կողմն տոն մեր Ազգային Ս. եկեղեցիին, որ առաջին անգամ իր ինքնուրույնությունը կնշտեր, հայ ազգային պետության քիչուհովը գորացած, և մյուս կողմն Ընդհանրական եկեղեցիին, որ հայ հոգևորական երկունքին մեջ կծրագրվեր՝ կազմակերպված հաստատության մը մարմինը տալով երեք դարերն ի վեր առաքելական փարոզությամբ մեր մեջ պաշտված ավետարանական հավատքին» (Խորգում պատրիարք, «Սուրբ և տոնք», էջ 330—331):

Ս. Էջմիածինը մարմնացումն է Լուսավորչի լուսեղեն տեսիլքի, իսկ հայ ժողովուրդը՝ լուսածին հոգևոր զավակը Ս. Լուսավորչի:

Ս. Գրիգոր Լուսավորչի լուսեղեն տեսիլքը հայ ժողովրդի հոգևոր և բարոյական զգացմունքների մեջ հետագայում մարմնացել, հավերժացել և Արագածի կատարին դարձել է Լուսավորչի պլպլացող, հավետ անմար կանթեղը, որ լույս առած մեծ Լուսավորչից, լուսավորել է հայ ժողովրդի անցյալի փշուռ նանապարհը, դեպի պայծառ, լուսավոր ապագա:

Լուսո խորան Ս. Էջմիածինը, որպես «Սին հեղէն... Տաճար Աստուծոյ և տուն աղօթից և Աթոռ Քանաճայապետութեան» (Ագաթ.), խտացումն է հայ հոգու հավերժական լուսաբաղձության, նրա հոգեկան սրտառույթ թռիչքի, հավատի, բարեպաշտության. «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Իգուր չէ, որ մեր ժողովուրդն ասում է. «ՀԱՎԱՏՔԸ ՔՐԻՍՏՈՍԻՑ, ԼՈՒՅՍԸ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՑ»:

Արտաշատի խոր վիրապից ծագեց այդ փրկարար լույսը հայ հողի և հայ սրտերի վրա, ինչպես Քրիստոսի կույս գերեզմանից կենդանու լույսը՝ բովանդակ աշխարհի և մարդկության համար:

Ս. Գրիգոր Լուսավորչի գույգ տոների և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տոնի հետ առնչվում է նաև Տրդատ Գ Արշակունի թագավորի տոնը նույն ժամանակաշրջանում:

Տրդատը սրբի լուսապսակ ունեցող Հայոց երկրորդ արքան է, որի անունը սերտորեն կապվում է պատմականորեն Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակվելու դեպքի հետ:

Տրդատ Գ-ը հայոց Կոստանդին Մեծն է, որը ոչ միայն պաշտպան կանգնեց Լուսավորչի առաքելական ու քաղաքական գործունեության, այլ նաև մեր երկիրը Դ դարի սկզբներին օտնեց պետական կենտրոնական իշխանությանը և հուսալիորեն հենված հայ ժողովրդի ղեկի Արշակունիների Գահը ունեցած հավատարմության և նվիրվածության վրա, ստեղծեց ամուր, ազգային կենտրոնական իշխանություն:

«Տրդատ քազավորն ալ պետք է նանչնալ իր Գրիգորի գործակից, այսինքն առաքելակից և լուսավորչակից մը»,—գրում է Օրմանյան սրբազանը:—«Տրդատ քազավոր Արշակունի հարստությունն էր և պարթևական ծագում ուներ, ինչպես էր նաև Գրիգորի հայրը, այնպես որ ազգակցության կապ մըն ալ կմիացներ երկու գործակիցները, քրիստոնեությանը և քաղաքականությանը և քրիստոնեության պաշտպան քազավորը: Քայց արևելակցությունն ավելի հավատա եռանդն էր, որ երկուքը գորավոր կապերով իրարու միացուցած էր» («Հայոց եկեղեցին», էջ 9):

Նույն ժամանակաշրջանում, վերոհիշյալ տոների հետ միասին, մեր եկեղեցին ցրեծագին հանդիսությամբ տոնում է նաև Ս. Հովսեփին և Ս. Գայանեի՝ Քրիստոսի սիրուն զոհված իմաստուն կույսերի նահատակության հիշատակը, որոնք քաղաքում կոչվեցին «ղիսապաշտ մուրադեանց» դեմ հանուն քրիստոնեական կրոնի նշմարտությունների և հայ ընտանեկան բարոյականի բարձր նորմաների պահպանության, և նահատակվելով դարձան «զոհ փրկության և փրկանք աշխարհին» հայոց:

Է դարի մեր բանաստեղծ և շինարար կառուցիկներից Կոմիտաս հայրապետը հորինել է մի չլնաղ երգողան շարական՝ «Անձինք նուիրեալ»-ը կույսերի հիշատակին, որը երգվում է միայն կույսերի տոնախմբության հանդիսության ժամանակ:

Հովսեփին և Գայանե կույսերի նահատակությունը գլխավոր պատճառներից մեկը դարձավ որպես պատմական եղելություն, Հայաստանում քրիստոնեական կրոնի հաղթանակի: Ինչքան երիտ է նկարագրել բանաստեղծ հայրապետը, երբ Հովսեփյան կույսերի նահատակության առթիվ գրում է. «Մե՛նա կուսանք ազգս բազումս»:

Այդ հոգևոր ծնունդը քրիստոնյա հայ ժողովուրդին էր:

Դ դարի Հայ եկեղեցու հայրապետների շարքում, Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելական և քաղաքական աշխատանքի մեծ արդյունավորությամբ շարունակում է Ս. Ներսես Պարթև հայրապետը, իր աշակերտ խաղ

եպիսկոպոսի հետ, որոնց տոներ նույնպես մեր եկեղեցին կատարում է նույն օրերին:

Մեր պատմիչներից Փավստոս Բյուզանդը, իր «Բուզանդարան պատմություն» աշխատության Դ և Ե դարերումների մեջ, Մեծն Ներսեսի մասին գրում է. «Իր մեջ կրում էր նա անպատմելի գործություններ. մանավանդ ուշադրություն էր դարձնում ողորմության կարգեր հաստատելու վրա. նախ ինքն անձամբ բարիքներ էր գործում, հետո ուրիշներին բարեգործության օրինակ տալիս. վարդապետական խոսքով առնասարակ հորդորում էր բոլորին, նրանց մտքերը ղեկի բարին էր դարձնում: Ուսուցանում էր, որ ամենամեծ բարիքներն են սերը, հույսը, հավատը, սրբությունը, քաղցրությունը, հեզությունը, անոխակալությունը: Հորդորում էր խնամել աղփատներին, նրանց դարմանել... Եվ բոլոր եկեղեցիները նրա օրերում խաղաղություն և նորոգություն գտան, բոլոր Մեծ Հայքում եպիսկոպոսների պատիվը մեծացավ, եկեղեցիների կարգերը ծաղկեցան, ամենակերպ լիովին պայծառացան, ամենայն վայելչությամբ հաստատվեցին կարողիկե եկեղեցիների կարգերը, սուրբ պաշտամունքի կարգերը անեցին, պաշտոնյաներն ավելացան: Եկեղեցու կարգերը շատացրեց շեն և անշեն տեղերում, նույնպես և կրոնավորների քիվր բազմացրեց:... Իսկ Հայոց Ներսես եպիսկոպոսը շինում էր Հայոց աշխարհի բոլոր ավերված տեղերը, խնամում ու մխիթարում էր, դարմանում ու պահպանում էր բոլոր աղփատներին, բոլորների և աղփատների համար ապաստարաններ էր պատրաստում: Ամեն տեղ եկեղեցիներ էր շինում, ավերածները նորոգում էր, բոլոր խանգարված կարգեր վերականգնում էր և ուղղում» (Փավստոս Բյուզանդ, «Հայոց պատմություն», քրգմ. ակսղ. Ս. Մալխասյանց, Երևան, 1947, էջ 143—144, 146, 255—256):

Օրմանյան սրբազան, հանրագումարի քերելով Մեծն Ներսես Պարթևի Դ դարի 60-ական թվականներին Հայաստանում կատարած ավերարանական, առաքելական, մարդասիրական և վանական գործունեությանը արդյունքները, եզրակացնում է. «Հայերը Ս. Սահակը կենանչան իր ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄՏԱՅ դպրությանը լույսով, ինչպես Ս. Գրիգորը եղած է ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՀՈԳՎՈՑ հավատի լույսով, և Ս. Ներսես՝ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՍՐՏԻՑ՝ բարոյականության լույսով» (Հայոց եկեղեցին», էջ 20):

Ե դարի առաջին երեսնամյակին, Հայ եկեղեցու երկու մեծագույն ղեմավորն են Ս. Սահակն ու Ս. Մեսրոպը, որոնց տոներ եզրափակում է նույն ժամանակաշրջանի ազգա-

յին-եկեղեցական հիշատակների և մեծ դեմ-
քերի նվիրված ազգային տոների շարքը:

Այնքան մեծ է եղել երախտիքը հայ մտքի
լուսավորչներ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի,
որ մեր եկեղեցին տարին մի քանի անգամ
պանծացնում է հիշատակը այս երկու ազ-
նրվագույն հոգիների, որոնք ստեղծեցին հայ
գիրն ու գրականությունը, հայերենի բարգ-
մանեցին Աստվածաշունչը, հիմք դրին մեր
գրավոր գրականության և լուսավոր հանա-
պարհ բացին հայ մշակույթի հետագա դա-
րերի մեջ՝ հայ սերունդների առաջ:

Ս. Գրիգոր Լուսավորչով սկսված Հայ եկե-
ղեցու նվիրապետության, վարչության կազ-
մակերպումը և դարում վերջացավ Սահակ-
Մեսրոպյան ամուլի մշակութային շարժմամբ,
որտեղ հայացավ, ազգայնացավ Հայ եկե-
ղեցին, լինելով հարազատ բարգմանը հայ
հավատի, հայ բարեպաշտության, հայ հո-
գու:

Մեր եկեղեցական տարեգրության և մա-
տենագրության մեջ շափազանց մեծ և ուշա-
գրավ է այն դերը, որը կատարել են Ս. Գրի-
գոր Պարբե հայրապետը, Մեծն Ներսեսը, Ս.
Սահակը ու Ս. Մեսրոպը, որոնց առաքելա-
կան գործունեությամբ Ս. Էջմիածինը դար-
ձավ «աղբիւր բացեալ գիտութեանն Աստու-
ծոյ, քանզի յԱյրարատեան գաւառին բոլսե-
ցին Հայոց շնորհ պատուիրանացն Աստու-
ծոյ» (Կորյուն):

Ազգիս վեհափառ Հայրապետը, «Շողա-
կար լուսո խորան էջմիածին» գեղեցկամյուս
իր փառքում գրում էր.

«Ե՛վ ԱՀԱ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԾՈ ՈՒ ՓՐԿԻԶԸ
ՄԵՐ, ՇԱՏ ԴԱՐԵՐ ԱՌԱՋ ԽՈՍԵՑԱՎ ՄԵՐ
ԱՇԽԱՐՀԻՆ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՆ, ՄԵԾ ԼՈՒ-
ՍԱՎՈՐԻԶ ԳՐԻԳՈՐ ՊԱՐԹԵՎԻ ՀՐԱՇՔ ԵՐԱ-
ԶՈՎ: ՊԱՏԳԱՄԵՆ ԷՐ ԵՐԿՆԱՅԻՆ, ԽՈՍՔՆ
ԱՍՏՎԱԾԱՅԻՆ, ՈՐ ԻՋԱՎ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇ-
ԽԱՐՀ, ՀՅՈՒՍԵՆԼՈՎ ՀՐԱՇԱԼԻ ԼՈՒՍԵ ԵՐԱԶԸ
Ս. ԼՈՒՍԱՎՈՐԶԻՆ:

Մենք ԶԱՎԱԿՆԵՐՆ ԵՆՔ ԱՅԴ ԼՈՒՍԵ ԵՐԱ-
ԶԻՆ:

ՈՒ ԱՅՍՕՐ ԱՆ, ԻՆԶՊԵՍ ՄԵՐ ՆԱԽԵՒՔ,
ԿԽՈՍՏՈՎԱՆԻՒՔ. «ՅԱՅՍՄ ՀԱՒԱՏՈՑ ԶՄԵՋ
ՈՉ ՈՔ ԿԱՐԷ ԽԱԽՏԵԼ»:

ԱՅՍՏԵՂ, ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՍՐՏԻՆ
ՎՐԱ, ԻՋՄԱՆ ԱՅՍ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌԱՋ, ՄԵՋ
ՀԱՄԱՐ ՀԱՅՏԵՎԱԾ Է ԽՈՍՔԸ: ԱՅՍՏԵՂ ՄՈ-
ՐԵՆԻՆ ՎԱՌՅԱԼ Է ՀՐՈՎ, ԵՎ ԶԱՅՐԻՐ ՄՈՐԵ-
ՆԻՆ: ԱՅՍՏԵՂ Է ՄԱՅՐ ԱԹՈՈՆ ՄԵՐ «ԱՍՏ-
ՎԱԾԱԿԵՐՏ, ԱՔԱՆՁՆԻ, ՀՐԵՂՆԵ»:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԻՒ, ԽՈՒՄԱՐՀԻՐ ՀԱՎԱՏՈՎ
ՈՒ ԵՐԿՅՈՒՂԱԾՈՒԹՅԱՄԲ, ՎԱՍՆՁԻ ԱՅՍ-
ՏԵՂ «ԵՐԿԻՐ ՍՈՒՐԲ Է» (Էջմիածին, 1951
թ., հուլիս—օգոստոս):

Այսօր ևս մեզ հետ խոսում են մեր մեծ
նախնիները և հորդորում քայլել իրենց բացած
լուսեղեն նախադասներով, հավատարիմ
մեր հոգևոր, բարոյական, իմացական, ազ-
գային այն սրբազան ավանդներին, որոնց
համար նրանք, մեր լուսաբնակ նախնիք՝
հայրապետ, արքա, շինական, կին քե այր,
տներեցին, աշխատեցին և մեզ ավանդ քոյե-
ցին Ս. Էջմիածինը, հայ գիրն ու գրականու-
թյունը:

Մեր լուսաբնակ մեծ հայրապետի տոնի
այս ուրախ առիթով, կրոնագրած երկյուղա-
ծությամբ և սրտառույ շերմեռանդությամբ,
ծնադրեմք նրանց խնկելի հիշատակի առաջ
և լուսավորչահիմն, փրստոսակերտ Մայր
Տանարի Ս. Խորանների առաջ սրտագին
աղոթենք, որ լուսավորչի Աստվածը, Սա-
հակ-Մեսրոպի Աստվածը է՛լ ավելի ծաղկեց-
նի և պայծառացնի Ազգիս սիրելի և շնորհա-
լի Հայրապետի՝ Վազգեն Վեհափառ Ամե-
նայն Հայոց Կաթողիկոսի փառանայապետա-
կան իշխանության գավազանը, որպեսզի
միշտ վառ մնան փրստոնեական կրոնի սուրբ
լույսը, հայրենի սրբությունների սերը, իրավ
հայրենասիրության և անշահախնդիր եկե-
ղեցասիրության զգացմունքը հայ հոգիների
մեջ, ու միշտ պայծառ և անընչ փողփողի
լուսավորչի հավատարմարժ կանթեղը հայ
հոգիների երկնականարի վրա:

«ԹԳԱՒՈՐ ԵՐԿՆԱՒՈՐ, ԶԵԿԵՂԻՑԻ ՔՈ
ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵԱ»:

